ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 224 Գ 165

«Դեպի վեր» առաջխաղացման ծառայության մասին

ք. Երևան 06 նոյեմբեր 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

իրավաբանական անձի անվանումը

Երևան Նորք, Գ. Հովսեփյան փող., 26 շենք, ի դեմս Հովհաննես Մովսիսյան, գործադիր տնօրեն

փաստացի գործունեության հասցեն

(հետագայում՝ Պատվիրատու) և «Սփյուռ» ՍՊԸ-ն (Երևան, Կիևյան 19, 6-րդ հարկ), ի դեմս ներկայացուցիչ Էլլինա Սարգսյան (Լիազորագիր № 285) (հետագայում՝ Կատարող), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կատարողը Պատվիրատուին մատուցում է պայմանագրի Հավելված 1-ում ընտրված փաթեթին համապատասխան «Դեպի վեր» առաջխաղացման ծառայություն, իսկ Պատվիրատուն վճարում է այդ ծառայության դիմաց՝ ստանալով «Արտոնյալ բաժանորդ» կարգավիճակ:

2. Կողմերի պարտականությունները

2.1 Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրի Հավելված 1-ում նշված «Դեպի վեր» փաթեթին համապատասխան տրամադրել Կատարողին իր կամ իր հետ փոխկապակցված կազմակերպության (հետագայում՝ Կազմակերպություն) վերաբերյալ տեղեկություններ (հետագայում՝ Տեղեկություններ)՝ որոնք ներկայացված են սույն պայմանագրի Հավելված 2-ում և Հավելված 2-ի լրացումներում:

2.2 Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Հավելված 2-ում և Հավելված 2-ի լրացումներում ներկայացված Տեղեկությունների հավաստիության և գործող օրենսդրությանը համապատասխան լինելու համար:

2.3 Կատարողը պարտավորվում է Տեղեկությունները ստանալուց հետո, ըստ իր կողմից մշակված խմբագրական նորմերի, մուտքագրել, խմբագրել, դասակարգել, թարգմանել (ներկայացնել 3 լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն) և ներառել «Սփյուռի» տեղեկատուներում սույն պայմանագրի կետ 2.4-ում նշված ժամկետներում, բացառությամբ «Սփյուռի» դասակարգչում բացակայող դասի առաջարկի, որի մշակման և ներառման համար կպահանջվի ևս երկու շաբաթ:

2.4 Կատարողը պարտավորվում է Տեղեկությունները ընդգրկել «Սփյուռի» տեղեկատուներում հետևյալ ժամկետներում.

2.4.1 **«Սփյուռ» հեռախոսային տեղեկատուում** (113, 011-331331, 010-519999)՝ 1 շաբաթվա ընթացքում: Կատարողը պարտավորվում է Կազմակերպության վերաբերյալ տեղեկությունները տրամադրել բոլոր այն զանգահարողներին, որոնց հարցումը վերաբերում է Կազմակերպության՝ որոնմանը մասնակցող Տեղեկություններին:

2.4.2 **Spyur.am վեբ-կայքում**՝ երկու շաբաթվա ընթացքում: Կատարողը պարտավորվում է «Սփյուռ» վեբ-կայքում Տեղեկությունները ներկայացնել համաձայն Հավելված 2-ում լրացված ծավալի՝ երեք վեբ-էջի տեսքով (հայերեն, ռուսերեն, անգլերեն)՝ անհատական կարճ վեբ-հասցեի տրամադրմամբ: Տեղեկությունները դառնում են հասանելի Spyur.am վեբ-կայքի բոլոր այցելուների, ինչպես նաև ինտերնետային որոնողական համակարգերի համար:

2.4.3 **«Սփյուռ» բջջային տեղեկատուում** (Android-ի և iOS-ի համար)՝ երկու շաբաթվա ընթացքում: Կատարողը պարտավորվում է «Սփյուռ» բջջային տեղեկատուում Կազմակերպության մասին տեղեկությունները ներկայացնել նշված տեղեկատուի համար նախատեսված տվյալների ծավալով:

2.4.4 **Տեղեկատու «Սփյուռ-մեսենջերում»**՝ 1 շաբաթվա ընթացքում: Կատարողը պարտավորվում է Կազմակերպության մասին տեղեկությունները «Սփյուռ-մեսենջերում» ներկայացնել նշված տեղեկատուի համար նախատեսված տվյալների ծավալով:

2.4.5 **«Սփյուռ» համակարգչային տեղեկատուում** (Windows-ի համար)՝ հաջորդ թողարկման մեջ, եթե համակարգչային տեղեկատուի թողարկման գործընթացը սկսվել է Տեղեկությունները ստանալուց հետո 1 շաբաթից ոչ շուտ: Կատարողը պարտավորվում է «Սփյուռ» համակարգչային տեղեկատուում Կազմակերպության մասին տեղեկությունները ներկայացնել նշված տեղեկատուի համար նախատեսված տվյալների ծավալով: Կատարողը պարտավորվում է ապահովել համակարգչային տեղեկատուի անվճար բեռնման հնարավորությունը Spyur.am կայքից:

2.4.6 **«Կոմպաս Հայաստանում»** (միջազգային «Կոմպաս» համակարգի՝ Kompass.com-ի «Հայաստան» բաժնում)՝ 1.5 ամսվա ընթացքում: Կազմակերպության մասին տեղեկությունները «Կոմպաս Հայաստանում» ներկայացվում են անգլերեն և ռուսերեն լեզուներով նշված տեղեկատուի համար նախատեսված տվյալների ծավալով:

2.5 Կատարողը պարտավորվում է բոլոր վերը նշված տեղեկատուներում որոնման արդյունքի ցանկում ապահովել Կազմակերպության բարձր դիրք՝ «Դեպի վեր» ծառայություն չպատվիրած կազմակերպությունների նկատմամբ:

2.6 Եթե Պատվիրատուն չի խախտել սույն պայմանագրով և իր լրացումներով սահմանված վճարման ժամկետը, ապա «Սփյուռի» տեղեկատուներում որոնման արդյունքում Կազմակերպության դիրքը որոշվում հետևյալ կերպ.

2.6.1 **«Սփյուռ» հեռախոսային տեղեկատուում** որևէ ապրանքով/ծառայությամբ Կազմակերպությունը որոնելու դեպքում Կազմակերպության դիրքը ցանկում որոշվում է առաջին հերթին այդ ապրանքի/ծառայության դասով պատվիրված հորիզոնականով՝ «Սփյուռ-վարկանիշ TP»-ով (բարձր վարկանիշը ապահովում է բարձր դիրք): Եթե Կազմակերպությունը չունի տվյալ դասով հորիզոնականի պատվեր, ապա կազմակերպության դիրքը, տվյալ դասով որոնման դեպքում, ամեն օր փոփոխվում է մնացած «Արտոնյալ բաժանորդների» դիրքի հետ միասին՝ հավասարաչափության սկզբունքով:

2.6.2 **Տեղեկատու «Սփյուռ-մեսենջերում»** դիրքը որոշվում է կազմակերպության «Սփյուռ-վարկանիշով» (բարձր վարկանիշը ապահովում է բարձր դիրք): Դիրքը որոշվում է նաև պատվիրած հորիզոնականով, եթե հարցումը իրականացվել է «Սփյուռ» հեռախոսային տեղեկատուի միջոցով:

2.6.3 **Spyur.am վեբ-կայքում, «Սփյուռ» բջջային տեղեկատուում, «Սփյուռ» համակարգչային տեղեկատուում** դիրքը որոշվում է կազմակերպության «Սփյուռ-վարկանիշով» (բարձր վարկանիշը ապահովում է բարձր դիրք):

2.6.4 եթե Պատվիրատուն խախտել է սույն պայմանագրով կամ իր լրացումներով սահմանված վճարման ժամկետը և զգուշացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում չի կատարում սահմանված վճարումը, ապա Կազմակերպության «Սփյուռ-վարկանիշը» և պատվիրած հորիզոնականը նվազեցվում են չվճարած գումարի չափով մինչև վճարում կատարելը, սույն պայմանագրի և իր լրացումների գինը թողնելով նույնը:

2.7 Եթե սույն պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուն ցանկանում է պատվիրել.

2.7.1 Տեղեկություններում փաթեթով չնախատեսված լրացուցիչ տվյալներ,
2.7.2 Տեղեկություններում կազմակերպության անվանման փոփոխում,
2.7.3 հորիզոնական կամ լրացուցիչ «Սփյուռ-վարկանիշ» որոշակի ժամկետի համար,
2.7.4 փաթեթին կից այլ լրացուցիչ ծառայություններ,

ապա Պատվիրատուի հետ կնքվում է «Պայմանագրի լրացում» համապատասխան հավելվածներով, որը համարվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

2.8 Տեղեկություններում առկա որևէ տվյալի փոփոխման (իրականությանը չհամապատասխանելու) դեպքում Պատվիրատուն պարտավոր է այդ մասին անմիջապես գրավոր տեղեկացնել Կատարողին:

2.9 Պատվիրատուն պարտավորվում է անհրաժեշտության դեպքում (Կատարողի պահանջով) Կատարողին տրամադրել Տեղեկություններում առկա տվյալի ճշգրտությունը հաստատող փաստաթուղթ: Տասնօրյա ժամկետում պահանջվող փաստաթուղթը չտրամադրելու դեպքում Կատարողն իրավունք ունի միակողմանիորեն հանել այդ տվյալը Տեղեկություններից՝ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

2.10 Կատարողը պարտավորվում է Տեղեկությունների փոփոխությունները մշակել և ընդգրկել իր տեղեկատուներում՝ սույն պայմանագրի 2.3 և 2.4 կետերում նշված ժամկետներում:

2.11 Կատարողի կողմից Պատվիրատուին մատուցվող հավելյալ ծառայություններն ու բոնուսները ներկայացված են սույն պայմանագրի Հավելված 1-ում:

3. Կողմերի իրավունքները

3.1 Պատվիրատուն իրավունք ունի վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը, 1 ամիս առաջ գրավոր տեղեկացնելով այդ մասին Կատարողին՝ վճարելով Կատարողի կողմից փաստացի կատարված պարտավորությունների դիմաց:

3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Կատարողն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը, գրավոր տեղեկացնելով այդ մասին Պատվիրատուին, և պահանջելու վերջինից կատարել վճարում՝ Կատարողի կողմից փաստացի կատարված պարտավորությունների մասով, ինչպես նաև պահանջելու վճարել տույժ՝ գումարի վճարման ուշացված յուրաքանչյուր օրվա համար՝ գումարի 0.1 տոկոսի չափով:

3.3 Կատարողն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը, եթե պայմանագրի հետագա իրականացումը դարձել է ֆինանսապես ոչ ձեռնտու Կատարողի համար:

3.4 Պատվիրատուն իրավունք ունի Տեղեկություններում կատարել փոփոխություններ ինչպես Կատարողի կողմից անցկացվող Տեղեկությունների ճշգրտումների ժամանակ, այնպես էլ արտահերթ կարգով:

3.5 Կատարողն իրավունք ունի Տեղեկություններում ներկայացված կազմակերպությանը (կազմակերպության ղեկավարին) ուղարկել գործարար և հանրային նշանակության էլեկտրոնային նամակներ, sms- կամ ձայնային հաղորդագրություններ:

3.6 Կատարողն իրավունք ունի Տեղեկությունները տեղադրել նաև Կատարողին չպատկանող՝ հանրությանը հասանելի այլ տեղեկատվական միջոցներում:

4. Պայմանագրի ժամկետը և գինը

4.1 Սույն պայմանագիրը գործում է մեկ տարով՝ **«01» նոյեմբեր 2020** թ.-ից մինչև **« 31» հոկտեմբեր 2021 թ.:**

4.2 Պայմանագրի գինը և նրա հաշվարկը ներկայացված են սույն պայմանագրի Հավելված 1-ում:

4.3 Պատվիրատուն պարտավորվում է պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վճարել պայմանագրի գումարը:

5. Այլ դրույթներ

5.1 Պատվիրատուն իրավունք ունի հետ պահանջել վճարված գումարն այն մասով, որով Կատարողն իր պարտավորությունները չի կատարել, բացառությամբ, երբ պարտավորության կատարումը դարձել է անհնարին Պատվիրատուի մեղքով:

5.2 Կողմերի կամքից և գործողությունից անկախ ծագած պայմանագրի կատարման անհնարինության դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է փաստացի կատարած պարտավորությունների դիմաց:

5.3 Եթե սույն պայմանագրի ժամկետի ավարտից հետո 15 օրվա ընթացքում որևէ կողմը մյուս կողմին գրավոր չի հայտնում մատուցվող ծառայությունների դադարեցման մասին, ապա պայմանագիրը երկարաձգվում է նույն պայմաններով անորոշ ժամկետով, և Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

5.4 Եթե Կատարողը սպառողներից գրավոր ստանում է հիմնավորված դժգոհություններ Պատվիրատուի Տեղեկություններում ներկայացված ապրանքների, ծառայությունների կամ սպասարկման որակի վերաբերյալ, իսկ Պատվիրատուն գրավոր չի ժխտում դժգոհություններում ներկայացված փաստերը, ապա Կատարողը կարող է որոշակի ժամկետով (մինչև թերությունների վերացումը) իջեցնել Կազմակերպության «Սփյուռ- վարկանիշը», հորիզոնականը՝ սույն պայմանագրի և իր լրացումների գինը թողնելով նույնը:

5.5 Սույն պայմանագրի բոլոր լրացումներն ու հավելվածները սույն պայմանագրի անբաժանելի մասերն են:

5.6 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր են այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են՝ կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

5.7 Սույն պայմանագիրը չեղարկում և փոխարինում է կողմերի միջև նույն առարկայի վերաբերյալ բանավոր և գրավոր բոլոր նախորդ բանակցությունները, պայմանավորվածությունները և պայմանագրերը:

5.8 Սույն պայմանագրով չկարգավորվող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

5.9 Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից (ներառյալ հավելվածները), յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Լրացուցիչ պայմաններ

Պատվիրատու	Կատարող
ՀՎՀՀ 01540062	ՀՎՀՀ 01801068
Հովհաննես Մովսիսյան	Էլլինա Սարգսյան
անուն, ազգանուն	անուն, ազգանուն
գործադիր տնօրեն	ներկայացուցիչ
պաշտոն	պաշտոն
ստորագրություն	ստորագրություն

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 1

(ծառայությունների ընտրում, գնի հաշվարկ)

Պայմանագիր (Պայմանագրի լրացում)՝

224-Գ-165 «06» նոյեմբեր 2020 թ.

Կատարող՝ «ՍՓՅՈՒՌ» ՍՊԸ, 0033, Երևան, Կիևյան 19, 6-րդ հարկ ՀՎՀՀ՝ 01801068
հ/հ՝ 15700011012001 00 «Ամերիաբանկ» ՓԲԸ

Պատվիրատու՝ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ**

իրավաբանական անձի անվանումը

	Միավոր	Միավորի գինը (դրամ)	Քանակ	Սկիզբ-ավարտ	Գինը (դրամ)
«Դեպի վեր» փաթեթ Փոքր + Միջին Մեծ (1 ամսվա գինը «Սփյուռ-վարկանիշն» է)	ամիս	**5250**	12		**63000 դր**
Լրացուցիչ «Սփյուռ-Վարկանիշ» (ապահովում է բարձր դիրք Spyur.am վեբ-կայքում, «Spyur» բջջային տեղեկատուում, տեղեկատու «Սփյուռ-մեսենջերում», «Սփյուռ» համակարգչային տեղեկատուում)	ամիս				
«Թոփ» հորիզոնական հեռասային տեղեկատուում (ապահովում է բարձր դիրք «Սփյուռ» հեռախոսային տեղեկատուում)	ամիս				
Փաթեթին կից հավելյալ տվյալներ					
Վեբ-կայք	հատ			պայմանագրի ժամկետ	
Առավելություններ (50 նիշ)	հատ			պայմանագրի ժամկետ	
Ապրանքանիշ, բրենդ (արտասահմանյան / հայկական)	հատ			պայմանագրի ժամկետ	
Գործունեության նկարագրում (50 նիշ)	հատ			պայմանագրի ժամկետ	
Գործունեության տեսակ «Սփյուռի» դասակարգչով	հատ			պայմանագրի ժամկետ	
Ապրանք, ծառայություն «Սփյուռի» դասակարգչով	հատ			պայմանագրի ժամկետ	
Ապրանքի/ծառայության տարատեսակ	հատ			պայմանագրի ժամկետ	
Ապրանքի/ծառայության տարատեսակի նկար (մինչև 850x700 px)	հատ			պայմանագրի ժամկետ	
Լոգոտիպ	տարի		1	պայմանագրի ժամկետ	
Ֆոտոշարքի նկար	հատ			պայմանագրի ժամկետ	
Տեսաշարքի վիդեո (տեսանյութ մինչև 5 ր. տևողությամբ)	հատ			պայմանագրի ժամկետ	
Փաթեթին կից հավելյալ ծառայություններ					
«Ամբողջական զետեղում Kompass.com-ում» Կազմակերպության տեղեկությունների տեղադրում Kompass.com միջազգային համակարգում՝ սույն պայմանագրում նշված տվյալների ծավալով, բացառությամբ էլ.փոստի, «Առավելություններ» տվյալի, մեկից ավել հասցեների և հեռախոսների: Որոնման արդյունքի ցանկում ցուցադրվում են կազմակերպության անունը, գործունեության նկարագրումը, բնակավայրը, երկիրը:	ամիս		12	պայմանագրի ժամկետ	
«Դեպի վեր» Kompass.com-ում Ապահովում է. ✓ «Ամբողջական զետեղում Kompass.com-ում», ✓ կազմակերպության ներկայացում Kompass.com կայքի որոնման արդյունքի էջի վերնամասում , ✓ տվյալներում էլ.փոստի առկայություն: Որոնման արդյունքի ցանկում ցուցադրվում են նաև կազմակերպության լոգոտիպը, հեռախոսը, էլ.փոստը: Տրամադրվում է տարատեսակ վիճակագրության:	ամիս				
				Պայմանագրի գինը	**63000 դր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ստորագրություն

ԿԱՏԱՐՈՂ

ստորագրություն